ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.
Տելեֆօն № 253.

*ՕԳՏՎԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ*

ԱՌԵՒՏՈՒՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ

**ԵՂԲ. Ա. ԵՒ ԵՍ. ԱՂՃՎԱՆԴԻ**

*խանութում. Գօլօվինսկի պրօսպեկտի վրա*

ՄԻԱՅՆ ՖՈՄԻՆԻ ՇԱԲԱԹՈՒՄ

**ՄԵՏԱՔՍԵԱՅ ԲԼՈՒԶԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

**ԱՌԱՆՁԻՆ ԶԵՂՉ Է ԱՆՎՈՒՄ—ԶԵՂՉՎԱԾ ԳՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ—25%**

*Մնացած ապրանքներից, այն է տղամարդկանց, կանանց և երեխաների ապիտակեղէն և կօնֆէկցիօն, 5 ռուբլու չափ ապրանք գնողը*

ՍՏԱՆՈՒՄ Է 10% ԶԵՂՉ ԱՒԵԼԻ

128. 0—6

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

պատիւ ունի յայտնել, որ ապրիլ ամսի 7-ին, ս. Նշան եկեղեցում կատարվելու է դպրոցիս բարերար հանգուցեալ

**ԱՒԵՏԻՔ ՓԻԹՕՅԵԱՆՑԻ**

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ

(կ. ե.) 263. 2—1

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի յայտնել, որ ապրիլի 5-ին Վանքի մայր եկեղեցում կատարվելու է դպրոցիս բարերար հանգուցեալ

**ՅՈՎՍԷՓ ԷՖԷՆԴԵԱՆԻ**

հոգեհանգիստը: 

(ու. կ.) 262. 2—2

Հատավաճառ բաժանմունքում

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

**ԵՂԲ. Ա. ԵՒ Ա. ՄԻԼՕՎՆԵՐԻ**

Գօլօվինսկի պր. Կադէտսկի կօրպուսի դիմաց

*Ֆօմինի շաբաթվայ ընթացքում*

ՆՇԱՆԱԿՎԱԾ Է

**ԷԺԱՆ ՄԵԾ ՎԱՃԱՌՔ**

*Յետաձգված ապրանքների*

Բրդէ, մետաքսէ եւ բամբակէ կտորների

ԱՄԵՂՆԱԳՈՐԾ ԶԳԵՍՏՆԵՐԻ՝ կիսապատրաստ ձևով

Բրդէ, բատիստեայ և այլ կտորներից:

*Տրիկօ* տղամարդկանց կօստիւմների համար

Մեծ քանակութեամբ զանազան *Մնացորդներ*

*Բոլոր այդ ապրանքները կը վաճառվեն*

ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ

(կ.) (առ) 283. 0—1

## Գ. Ս. Դօրօժնով

*Սօլօլակսկայա փ., տուն Գուրգէնօվի, տէլէֆօն № 533.*

**ՖՕՄԻՆԻ ՇԱԲԱԹՎԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

*Այսինքն՝ ապրիլի 6-ին, 7-ին, 8-ին, 9-ին, 10-ին և 11-ին*

ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ԽՈՇՈՐ ՎԱՃԱՌՔ

և մի քանի շարք ստացված պատահական ապրանքներ, որոնք գնված են ֆիրմայի կողմից շատ էժան գներով, շնորհիւ ֆաբրիկաներում արգիլնաբերած աւելորդ ապրանքների. հետևաբար, բոլոր այդ ապրանքները վերոյիշեալ օրերի ընթացքում կը վաճառվեն

ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ

Պ.պ. գնողների առանձին ուշադրութիւնն ենք դարձնում գների ապշեցնող էժանութեան վրա:

*Գների չլսված էժանութիւն*

Դաչած չիթ, սկսած $8^1/_2$ կ. արշինը.
Չիթ, կրէտօն, դաչած, սկսած 10 կ. արշ.
Ֆրանսիական քաթան՝ բարձր յատկութեան, շատ ամուր, սկսած $12^1/_2$ կ. արշ.
Յատուկ կտոր կանանց ամառային զգեստների համար՝ տուալսակ, գրօ-տուալ և հիանալի կար ունեցող բէզուս, որը կարելապէս փոխարինում է թանգագին բրդեղէն կտորներին, սկսած 15 կ. արշինը.
Վարտիկացու տրիկօ, կտորը 2 ր. 10 կ.,
Զգեստի համար տրիկօ, $4^1/_2$ արշ., 5 ր. 50 կ. ամբողջ զգեստի համար.
Բրդեղէն կտորներ, սկսած 45 կ. արշինը.
Մետաքսէ ֆուլիար, սկսած 29 կ. արշինը.
Բրդեղէն կտորների անհագին մնացորդներ.
Երեսսրբիչի քաթան, սկսած 7 կ. արշինը.
Սաւաններ եզրներով, 76 կ. հատը.
Քաթանի մնացորդներ և յատուկ կտորներ ապիտակեղէնի համար:

Պատրաստի ապիտակեղէնի և գուլպաների ապրանքների բաժանմունքում, նոյնպէս և անցեալ սէզօնների բոլոր ապրանքները կը վաճառվեն

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԷԺԱՆ ԳՆՈՎ

Լուսամուտներում հանդէս են դրված ապրանքների բոլոր նմուշները, որոնց վրա գրված են զարմանալի էժան գներ:

Գ. ԴՕՐՕԺՆՕՎ.

288. 1—1

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ!

Ի նկատի ունենալով, որ մինչև այժմ շարլատանները սպառեն իրանց աւելի վատ ապրանքները, գործածելով պիտակներ և կապոցների միատեսակ ներկն ու մարկան, փոխանակ բոլորին յայտնի

Заявлен отделу промышленности

**ԲԱՐՁՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ**

ՍԻՄՊԱՏԻԱ 10 ՀԱՏԸ 5 ԿՈՊ.

№ 8 10 ՀԱՏԸ 5 ԿՈՊ.

Ինչպէս նաև մեր ֆիրմայի ուրիշ գլանակներ, մեր պ. պ. գնողներին խնդրում ենք ուշադրութիւն դարձնել ՖՈՐՄԱՐԱՆԱՑԻՆ ՄԱՐԿԱՅԻՆ և ազգանունին

**Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՔ**

(հ. կ.) 23 10—4

Հինգշաբթի, ապրիլի 9-ին, Կովկ. Հայոց Բարեգործ. Ընկ. նոր շինութեան դահլիճում (Արաս-Արատսկի հրապ., սեփ. տ.)

կը կայանայ

Հայոց Ազգագրական Ընկերութեան

**ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ ՆԻՍՏԸ**

Որտեղ ընկերութեան անդամ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԸ կանի բանախօսութիւն

**„ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ“.**

Ծրագիրը.—Ա. Մաս. Աշուղը պատմական շրջաններում. ա) օտար ազգերի մէջ, բ) հայոց մէջ: Աշուղների նշանակութիւնը. ա) աշուղը երգիչ, երաժիշտ, գրող. բ) աշուղը հասարակական գործիչ: Բ. Մաս. Աշուղական արուեստ. ա) երգերի տաղաչափութիւնը և ձևերը. բ) եղանակները և երաժիշտ. գործիքները: Աշուղի կեանքը, անհատական և հասարակական:

Մանրամասն ծրագիրը կը բաժանվի նիստի օրը:

Բանախօսութեան միջոցին երգերը և եղանակները կը նուագեն ու կերգեն աշուղներ՝ աշուխ Ջամալի ղեկավարութեամբ: Պարեղանակների և պարսկական եղանակների համար Ալեքսանդրօպօլից հրաւիրված է յայտնի Թառ ածող Գրիգորը իր խմբով:

Սկիզբն է $7^1/_2$ ժամին երեկոյեան

Տեղերի գները. I կարգ 1 ր. 50 կ., II—V կարգ 1 ր., VI—X կարգ 50 կ., մնացած կարգերը դպրոցականների համար 30 կոպ.:

Մուտքը յատկացված է աշուղ Ջիւանու երգերի հրատարակութեան ֆօնդին:

Տոմսակները վաճառվում են եղբ. Սուղանաջեանների երաժ. մագազինում և «Գուտենբերգ» գրավաճառանոցում. Նիստի օրը Բարեգ. Ընկ. գրասենեակում:

(կ. հ.) (առ.) 280. 2—1

Տօների պատճառով

**„Խարարալայի“**

Հերթական № 14-ը փոխանակ ամսիս 4-ին, շաբաթ օրը հրատարակվելու՝ լոյս կը տեսնի երկուշաբթի, ապրիլի 6-ին:

(առ.) 287. 1—1

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ

**Ա. Գ. ՄԱՁԷՐ**

Елизаветинская ул., д. № 55.

(առ.) 281. 1—1

Զուբալօվի ժողովրդական տանը

ԲԱՑՎԱԾ Է

Կովկասեան Նկարիչների Փոխադարձ Օգնութեան Ընկերութեան

**Պատկերների**

**Ցուցահանդէս**

Բաց է ամէն օր առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 6-ը:

Մուտքը 20 կոպ.:

### ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ. ՊՕԼՍՈՒՄ

II

Կ. Պօլիսը միշտ գտնվել է եւրոպական պետութիւնների ազդեցութեան տակ: Եւ յայտնի են շրջաններ, երբ նա եղել անգլիական, ֆրանսիական, ռուսական, աւստրիական համակրութիւնների և թելադրութիւնների ազդեցութեան տակ:

Վերջին երկու տասնամեակներում շատ ուժեղացաւ գերմանական ազդեցութիւնը: Գերմանիան այնքան կարողացաւ գրաւել Թիւրքիայի արքունիքի և քաղաքագէտների համակրութիւնը, որ նոյնիսկ համոզում էր գոյացել քաղաքական աշխարհում, թէ Թիւրքիայի և Գերմանիայի դաշնակցութեան մէջ գոյութիւն ունի գաղտնի համաձայնութիւն, որը պէտք է հանդէս գայ ճգնաժամի օրերում, երբ Եւրոպան բռնկված կը լինի պատերազմական հրդեհով:

Գերմանական ազդեցութեան ուժե-

